բիներ, երբ ուսուցչութիւն էի արել փող աշխատելու համար։ Մի քանի տարիներ էլ, երբ ես խիստ չաղ պաշտօններ էի վարել և ապրել էի միայն կեանք վայելելու համար, այսինքն զուարճանալու գինով, օղիով, գարեջրով, հիւրիներով, արբեցութեամբ և շռայլութեամբ։ Այդ միջոցին քնում էի, հաճոյքից, արբեցութիւնից ձանձրացած կաշկանդված, որ միւս օրը ոյժ ունենայի կեանքի վայելումը շարունակելու։ Այդ կեանքի ամենալուրջ ժամանակը այն էր, երբ ես մտածում էի նոր մոդով, գեղեցիկ թանկագին կերպով հագնվելու, անոշահոտութեանց մէջ տոգորված, սիրուն, գրաւիչ երևալու, գեղեցիկ սեռը հրապուրելու համար։ Լաւ մաներներ, սուր նախադասութիւններ անգիր արած. խօսքեր ծիծաղելու, խօսքեր ծիծաղացնելու համար, փախչում էի վատ աղքատ հագնված ընկերներից, կարծիք չը տալու համար, որ ես դրանց հաւասարն եմ։ Ճանճի նման կպչում էի մեծ համարուածների պոչին, աշխատում էի աղնիւ ձեւանալ նաև ծագումով, գիտնական խելացի և այլոց համարել ռամիկներ, էշեր և աւանակներ։ Այդ ամենը, որ ընկերի կտրած մատի վերայ մի աղ ածելը չ՝արժէր, այն ժամանակ ընդունված էր բարձր կենցաղաւարութեան մէջ և գեղեցիկ սեռից խրախուսված և վարձատրված։